

# ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԵՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

## GANTEGH

BULLETIN DU DIMANCHE

DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE

ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



## GANTEGH

SUNDAY BULLETIN OF

ST. GREGORY THE ILLUMINATOR

ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

[WWW.SAINTGREGORY.CA](http://WWW.SAINTGREGORY.CA)

*ԿԻՐԱԿԻ, 18 ՆՈՅԵՄԲԵՐ 2018*

*ժ. Կիրակի Չկնի Սրբոյ Խաչին / ԹԻԻ 85*

*Բարեկենդան Յիսնակաց պահոց*

**Dimanche 18 novembre 2018**

10ème Dimanche après la Sainte Croix / NO. 85

**Prémice de l'Avent**



**Today's Bible Readings**

**Philippians 1:1-11 / Luke 9:44-50 /**

**Les lectures de la Bible d'aujourd'hui:**

**Philippiens 1:1-11 | Luc 9: 44-50 |**

**Պատարագի՛չ՝**

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ / Յոգեւոր Յովիւ**

**Célébrant:**

**RÉV. PÈRE DAVID MARGARYAN/ Prêtre Paroissial**

**Office Matines à 9 :30 - Առաւօտեան ժամերգութիւն 9:30-ին**

**La Sainte Messe à 10:30 - Ս. Պատարագ ժամը 10:30-ին**

**Office de Requieme à Midi - Յոգեհանգստեան Պաշտօն կէսօրին**

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan, Dn. Kami Sarimanukoglu, Dn. Zaven Der Sahagian**

**Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian**

**Choirmaster: Mr. Sarkis Barsemian**


**Organist: Mr. Karen Manucharyan**

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com) | [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)

# ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS



## ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐ 1.1-11

**1**Պօղոս եւ Տիմոթէոս՝ Յիսուս Բրիստոսի ծառաները՝ Բրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն, որ Փիլիպպէի կողմերն են՝ եպիսկոպոսներով ու սարկաւազներով. **2**շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Զօրմէն, ու Տէր Յիսուս Բրիստոսէ:

**3**Շնորհակալ կ'ըլլամ իմ Աստուծմէս՝ ձեզմէ ունեցած բոլոր յիշատակներու համար, **4**ամէն ատեն՝ ամէն աղերսանքիս մէջ: Ուրախութեամբ կ'աղերսեմ ձեր բոլորին համար, **5**քանի որ հաղորդակից եղաք աւետարանին՝ առաջին օրէն մինչեւ հիմա. **6**այս մասին համոզուած եմ թէ ա՛ն որ սկսաւ բարի գործ մը ձեր մէջ, պիտի աւարտէ մինչեւ Յիսուս Բրիստոսի օրը: **7**Իրաւացի ալ է ինծի այսպէս մտածել ձեր բոլորին մասին, քանի որ ձեզ ունիմ իմ սիրտիս մէջ՝, ու դուք բոլորդ հաղորդակցեցաք ինծի եղած շնորհքին՝ թէ՛ իմ կապերուս, թէ՛ ալ աւետարանին ջատագովութեան եւ հաստատութեան մէջ: **8**Որովհետեւ Աստուած վկայ է թէ ո՛րքան կարօտցած եմ ձեզ բոլորդ՝ Բրիստոս Յիսուսի գութով, **9**ու սա՛պէս կ'աղօթեմ՝ որ ձեր սերը հետզհետէ աւելի առատանայ գիտակցութեամբ եւ ամբողջ դատողութեամբ, **10**որպէսզի դուք զատորոշէք տարբեր բաները՝ անկեղծ եւ անսայթաք ըլլալու համար մինչեւ Բրիստոսի օրը, **11**լեցուած արդարութեան պտուղներով Յիսուս Բրիստոսի միջոցով՝ Աստուծոյ փառքին ու գովութեան համար:

## ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 9.44-50

**44**Բոլորը կ'ապշէին Աստուծոյ մեծամեծ գործերուն վրայ: Մինչ բոլորն ալ կը սքանչանային Յիսուսի բոլոր ըրածներուն վրայ, ան ըսաւ իր աշակերտներուն. «Դուք այս խօսքերը ձեր մի՛տքը պահեցէք՝, որովհետեւ մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: **45**Բայց անոնք չէին հասկնար այս խօսքը, եւ անոնցմէ ծածկուած էր՝ որպէսզի չըմբռնեն. ու կը վախնային հարցնել իրեն այդ խօսքին մասին:

**46**Մտածում մըն ալ ծագեցաւ անոնց մէջ, թէ արդեօք ո՛վ է մեծագոյնը իրենց մէջ: **47**Յիսուս ըմբռնելով անոնց սիրտին մտածումը՝ առաւ մանուկ մը, կայնեցուց զայն իր քով, **48**ու ըսաւ անոնց. «Ո՛վ որ կ'ընդունի այս մանուկը իմ անունովս՝ զի՛ս կ'ընդունի, եւ ո՛վ որ զիս կ'ընդունի՝ զիս դրկո՛ղը կ'ընդունի. որովհետեւ ա՛ն որ ամենէն պզտիկն է ձեր բոլորին մէջ, անիկա՛ պիտի ըլլայ մեծը»:

**49**Յովհաննէս ըսաւ. «Վարդապե՛տ, մէկը տեսանք որ դէւեր կը հաներ քու անունովդ, եւ արգիլեցինք զայն՝ քանի որ մեզի չի հետեւիր»: **50**Յիսուս ըսաւ անոր. «Մի՛ արգիլէք, որովհետեւ ա՛ն որ մեզի հակառակ չէ, մեր՝ կողմէն է»:

## Philippians 1.1-11

**1** Paul and Timotheus, the servants of Jesus Christ, to all the saints in Christ Jesus which are at Philippi, with the bishops and deacons: **2** Grace be unto you, and peace, from God our Father, and from the Lord Jesus Christ. **3** I thank my God upon every remembrance of you, **4** Always in every prayer of mine for you all making request with joy, **5** For your fellowship in the gospel from the first day until now; **6** Being confident of this very thing, that he which hath begun a good work in you will perform it until the day of Jesus Christ: **7** Even as it is meet for me to think this of you all, because I have you in my heart; inasmuch as both in my bonds, and in the defence and confirmation of the gospel, ye all are partakers of my grace. **8** For God is my record, how greatly I long after you all in the bowels of Jesus Christ. **9** And this I pray, that your love may abound yet more and more in knowledge and in all judgment; **10** That ye may approve things that are excellent; that ye may be sincere and without offence till the day of Christ.

**11** Being filled with the fruits of righteousness, which are by Jesus Christ, unto the glory and praise of God.

## Luke 9.44-50

**44** Let these sayings sink down into your ears: for the Son of man shall be delivered into the hands of men. **45** But they understood not this saying, and it was hid from them, that they perceived it not: and they feared to ask him of that saying. **46** Then

there arose a reasoning among them, which of them should be greatest. <sup>47</sup> And Jesus, perceiving the thought of their heart, took a child, and set him by him, <sup>48</sup> And said unto them, Whosoever shall receive this child in my name received me: and whosoever shall receive me received him that sent me: for he that is least among you all, the same shall be great. <sup>49</sup> And John answered and said, Master, we saw one casting out devils in thy name; and we forbad him, because he followed not with us. <sup>50</sup> And Jesus said unto him, Forbid him not: for he that is not against us is for us.





## Հոգեւոր Հոգիւի Պատգամը

«Աշակերտներուն մէջ վեճ յառաջ եկաւ, թէ արդեօք իրենցմէ ո՛վ է մեծը: Երբ Յիսուս իմացաւ անոնց սրտին խորհուրդները, վերցուց մանուկ մը, կանգնեցուց անոնց մէջ իրեն մօտ եւ ըսաւ անոնց.

«Ով որ այս մանուկին ընդունի իմ անունովս, ինծի կ'ընդունի. իսկ ով որ ինծի ընդունի, կ'ընդունի զիս ուղարկողը. Որովհետեւ, ով որ ձեր մէջ

փոքրագոյնն է, ան՛ է մեծը»:(Ղուկ. 9:46-48)

Սիրելի հաւատացեալներ,

Աւետարանական այս հատուածը, ուր առաքեալները կը վիճէին առաջնահերթութեան մասին, կը յիշատակուի նաեւ Մատթէոս եւ Մարկոս առաքեալներուն կողմէ գրուած աւետարաններուն մէջ (Մատթ. 18:1-5, Մարկ. 9:33-37): Ահա նաեւ մէկ այլ ուշագրաւ դրուագ, որ անմիջական կապի մէջ է մեր քննարկելիք հատուածին հետ. «Չեբեդէոսի որդիները՝ Յակոբոսը եւ Յովհաննէսը, գացին անոր մօտ եւ ըսին անոր. «Վարդապետ, ինչ որ քեզմէ պիտի խնդրենք, կը կամենանք, որ ընես մեզի համար»: Եւ ան անոնց ըսաւ. «Ի՞նչ կը կամենաք ինձմէ, որ ընեմ ձեզի համար»: Եւ անոնք ըսին անոր. «Շնորհք տուր մեզի, որ նստինք մէկս՝ քու աջիդ եւ միւսս՝ ձախիդ, քու փառքիդ մէջ» (Մարկ. 10:35-38):



Այս հատուածները կը բացայայտեն մեզի մարդկային հպարտութեան ու փառասիրութեան դրսեւորումները, որ չէին շրջանցած նաեւ առաքեալներուն: Սակայն պիտի պարզաբանենք, որ անոնք ի յայտ եկան եւ նկարագրուեցան աւետարաններուն մէջ՝ Աստուծոյ թոյլտուութեամբ, որպէսզի հետագայ սերունդներուն ամօք բացուի մարդկային էութեան ողջ մեղսաւորութիւնը, թուլութիւնն ու ոչնչութիւնը: Նաեւ պարզ կը դառնայ մեզի համար, որ ինչքան ալ Քրիստոսի աշակերտները ի սրտէ կը սիրէին ու նուիրուած էին Տիրոջը, սակայն ոչ մէկ կերպով չէին կարողանար ձերբազատուիլ Աստուծոյ Մեսիայի թագաւորութեան մասին հրեական սխալ պատկերացումներէն, ուստի եւ ողջ խորութեամբ չէին ընկալեր Անոր սուրբ

գործը: Բանն այն է, որ այս իրադարձութիւններէն անմիջապէս առաջ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս սկսաւ արդէն բացայայտ խօսիլ իրեն սպասուող չարչարանքներուն, խաչին վրայ անարգ մահուան եւ երրորդ օրուան յարութեան մասին (Մատթ. 16:20): Եւ այստեղ եւս մէկ անգամ համոզուեցաւ, թէ դեռեւս որչափ հեռու էին աշակերտները Չինք հասկնալէն:

Իսկ ահա Տիրոջ պատասխանը աշակերտներուն այն հարցումին, թէ ո՞վ պէտք է իրենցմէ մեծը ըլլար Քրիստոսի արքայութեան մէջ, որուն շուտով կը սպասէին, ուղղակի եւ վճռականօրէն ուղղուած էր արմատախիլ ընելու անոնց ձգտումները դէպի առաջնութեան. «...այլ ձեզմէ ով կամենայ մեծ ըլլալ, թող ըլլայ ձեր սպասաւորը. եւ ձեզմէ ով կամենայ առաջին ըլլալ, բոլորին ծառայ թող ըլլայ.» (Մարկ. 10:43, 44): Եւ չնայած Երկնային Արքայի յայտնութիւնը մարդկային մարմնին մէջ, ծնունդը՝ ոչ թէ արքայական պալատին մէջ, այլ՝ ախոռին մէջ, թափառական ու ամենայն հարմարաւետութենէն զուրկ կեանքը, իսկ այնուհետեւ կրած չարչարանքներն ու անարգ մահը՝ մարդկութեան մեղքերը քաւելու համար, արդէն իսկ ակնյայտ օրինակ մըն էր՝ մեծագոյն խոնարհութեան, սակայն Յիսուս Քրիստոս տեսաւ անհրաժեշտութիւնը, մէկ անգամ եւս, իր խօսքով մեկընդմիշտ սահմանելու համայն մարդկութեան համար, որ առաջնութիւնը իր արքայութեան մէջ կը տրուի ոչ թէ անոր, որ կը ձգտի ամենէն բարձր ըլլալ, այլ անոր՝ ան որ կը խոնարհեցնէ իր անձը՝ միւսներուն զիջելով առաջին ու բարձր տեղերը: Այսինքն անոնք մեծ պիտի ըլլային խոնարհութեան մէջ: Եւ Աստուածորդիի սեփական օրինակը, որ Տէրը մատնացոյց ըրաւ՝ մեծագոյնն էր առաքեալներուն եւ մեզի համար, որուն պէտք է բոլորը հետեւին. «որովհետեւ մարդու Որդին չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ՝ ծառայելու եւ տալու իր անձը որպէս փրկանք շատերու փոխարէն» (Մարկ. 10:45): Այսպիսով, Տէրը ամբողջովին գլխավայր կը շրջէ մարդկային թիւր պատկերացումները՝ պաշտօնակարգութեան վերաբերող: Քանզի երկրային արքաները կ'ապրէին շքեղութեան ու աշխարհիկ փայլքի մէջ եւ իրենց կարծեցեալ բարձրունքէն կը նայէին իրենց հպատակներուն աղքատութեան ու նեղութիւններուն: Իսկ Տէրը ցոյց տուաւ բոլորովին հակառակ կերպարը՝ խոնարհ սիրոյ վսեմութեան ու վեհութեան կերպարը: Եւ որպէսզի ակելի ակնյայտ ու հասկնալի ըլլայ այս նոր կարգը, Տէրը իր մօտ կանչեց մանուկի մը, որ ժամանակագրի վկայութեամբ, հետագային դարձաւ Անտիոքի Եպիսկոպոս, սուրբ Նահատակ Իգնատիոս Աստուածագգեացը, կանգնեցուց անոր աշակերտներուն միջեւ եւ մատնացոյց ընելով՝ ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեսձ ձեզի, եթէ չդառնաք ու չըլլաք մանուկներու պէս, երկինքի արքայութիւնը չէք մտներ: Արդ, ով որ իր անձը կը խոնարհեցնէ ինչպէս այս մանուկը, երկինքի արքայութեան մէջ ան՝ է մեծը: Եւ ով որ իմ անունովս այսպիսի մանուկ մը ընդունելու ըլլայ, ի՛նձի կ'ընդունի» (Մատթ. 18:3-5): Այսինքն, եթէ անոնք չհրաժարին իրենց սխալ պատկերացումներէն Քրիստոսի թագաւորութեան մասին եւ այդ թագաւորութեան մէջ առաջին տեղերը գրաւելու իրենց փառասեր յոյսերէն, ապա երբեք չեն մտներ երկինքի արքայութիւն:



Մանուկները մաքրամաքուր սիրտ ունին ու պարզամիտ են: Անոնք զուրկ են իրենց անձը բարձրացնելու ու բան մը ձեռք ձգելու կանխակալ մտքերէն: Անոնք երկչոտ են ու խոնարհ: Անոնց մէջ բացակայ է նախանձը, փառասիրութիւնն ու առաջինը ըլլալու ցանկութիւնը: Ահա այս յատկանիշները պիտի ունենան անոնք, որոնք կը ցանկան ժառանգել Աստուծոյ երկնային արքայութիւնը: Այսինքն ան՝ որ կը հրաժարի իր կարծեցեալ մեծութենէն, փառասիրութենէն ու հպարտութենէն եւ կ'ընդունի խոնարհութեան եւ հեզութեան իմաստութիւնը, կը դառնայ այնքան փոքր, որքան այդ երեխան՝ միայն ան էր որ մեծ նշանակութիւն ունեցաւ Տիրոջ երկնային արքայութեան մէջ:

Միաժամանակ Յիսուս Քրիստոս հրաշալի օրինակ մը տուաւ իր աշակերտներուն՝ Աստուծոյ արքայութեան ժառանգորդներուն փոխյարաբերութիւններուն մասին. «Եւ ով որ իմ անունովս այսպիսի մանուկ մը ընդունելու ըլլայ, ի՛նձի կ'ընդունի» (Մատթ. 18:5): Այսինքն ան որ Յիսուս Քրիստոսի անունով՝ սիրով կը վերաբերի այդպիսի փոքրիկ երեխաներուն կամ այն հեզ ու խոնարհ մարդոց հետ, որոնք կը նմանին այդ մանուկներուն, հետեւած կ'ըլլան Յիսուսի պատգամին՝ սիրով վերաբերելու բոլոր տկարներուն ու անարգուածներուն, անոր միջոցաւ ընդունելով միայն Աստուծոյ Միաձին Որդին:

Ինչպէս արդէն նշեցի, մեր Տիրոջ ողջ կեանքը խոնարհութեան մեծ դաս մըն է, որ տրուեցաւ մեզի՝ մեր իսկ փրկութեան եւ Աստուծոյ արքայութեան արժանանալու համար: Ու ինչքան ալ մեր մեղաւոր հոգիներուն համար դժուար թուի մեր հպարտութենէն ու փառասիրութենէն հրաժարումը, մենք քաջ պիտի գիտակցինք, որ խոնարհութիւնն է Աստուծոյ արքայութիւն տանող ճշմարիտ ուղին: Եւ պէտք է հասկնանք, որ Քրիստոսի խոնարհութիւնը ամենեւին ալ թուլութիւն չէ, ինչպէս կը կարծեն անհաւատները, այլ բացարձակ ու կատարեալ ուժ: Քանի որ ինչպէս բազմիցս ցոյց տուած է մարդկային պատմութիւնը, այն աշխարհիկ թագաւորները եւ բռնապետերը, որոնք իրենց իշխանութիւնը հիմնած են բռնութեան ուժով, ժամանակաւոր բնոյթ կրած են եւ անխուսափելիօրէն կործանման ենթարկուած են: Իսկ թագաւորութեան ու բարձրութեան օրինակը, որ Քրիստոս ցոյց տուաւ խոնարհութեան եւ զոհաբերութեան միջոցով, ան այն փառքն ու մեծութիւնն է, որ յաւիտենական է: Ի հարկէ, բոլորն ալ կը ցանկան յարմարաւետ ու անհոգ կեանքով ապրիլ: Սակայն Յիսուս Քրիստոս մարդկութեան առջեւ բացաւ մէկ այլ հարթութիւն՝ չփնտռել սեր, այլ պատգամեց՝ սիրել, չգերադասել իր անձը, այլ խոնարհեցնել այդ ուրիշներուն առջեւ: Տերը մեր առջեւ բացաւ Երկինքի բոլոր գաղտնիքները, Նոր Ուխտի, նոր ծնունդի բոլոր օրէնքները, որպէսզի անոնց հետեւելով՝ վերածնինք, որպէս նոր արարածներ:

Այսպիսով մեր առջեւ դրուած խնդիրն է՝ խորհիլ ու գործել Քրիստոսի այն պատգամներուն համաձայն, որ այսօր սորվեցանք Աւետարանական այս

հատուածներէն եւ որոնք մեր առջեւ կը բանան յաւիտենական կեանքի ու Աստուածային ուրախութեան ճշմարիտ ճանապարհը: Յիշենք, որ Մարդու Որդին չեկաւ, որպէսզի իրեն ծառայեն, այլ զոհաբերութեան ու խոնարհութեան ծառայութեամբ իր կեանքը տուաւ՝ մեզ մեր մեղքերէն փրկագնելու ու յաւիտենական կեանքին արժանացնելու համար:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից , ամէն:

Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան

Յոգեւոր հովիւ

## Résumé de la Prêche

Une préoccupation entra dans l'esprit des Apôtres, savoir lequel d'entre eux pouvait être le plus grand.

Jésus voyant leur tourment prit un enfant et leur dit "Celui qui récite en mon nom cet enfant, me récite et récite celui qui m'a envoyé car le plus petit parmi vous est grand" (Luc9;46-48).

Cette parabole révèle l'orgueil s'extérioriser même chez les Apôtres qui malgré leur attachement à Jésus ne réalisaient pas la petitesse et la vanité de l'être humain.

Ailleurs Jésus dit aux Apôtres ( Marc 10;43) "Quiconque veut être le premier parmi vous ,qu'il soit votre serviteur" La vie de Jésus est un témoignage d'humilité qui nous guide, dans notre vie quotidienne, sur le chemin vie éternelle.

**En bénédiction**


Père David Margaryan

Prêtre paroissial





# ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ



## ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԱՂՕԹՔ

Դրոշմէ՛ հոգիիս մէջ՝ քու երկիւղդ, որպէսզի մաքրութեամբ եւ արդարութեամբ ապրիմ, միշտ քեզ ունենալով մտքիս մէջ:

Իմ կամքս յօժար դարձուր բարիին եւ քու կամքիդ, դուն ուղղէ իմ խօսքերս, որպէսզի միշտ վայելուչը ընտրեմ:

Իմ տկար անձս մի՛ մատներ այս աշխարհի փորձանքներուն ու տագնապներուն, որպէսզի չըլլա՛յ որ շեղիմ քու խօսքէդ եւ բարի շաւիղէն:

Իմ սրտիս մէջ բողբոջէ եւ աճեցուր բոլոր առաքինութեանց սերմերը, որպէսզի անոնցմով ապրիմ իմ ամբողջ կեանքս:

Շնորհէ՛ որ միշտ խոնարհ ըլլամ, հեզ եւ համեստ՝ վարքով, բարի եւ մաքուր՝ խորհուրդներով, խօսքով ու գործով, ճշմարտախօս ըլլամ եւ ուրիշին չվնասեմ իմ խօսքերովս, հաւատարիմ եւ ժրաջան ըլլամ պարտականութիւններուս կատարումին եւ մանաւանդ այն դերին մէջ, որ դուն տուիր ինձի:

Թող արդար, բարեմիտ, իրաւունքը սիրող եւ ողորմած ըլլամ, իմ բոլոր գործերուս մէջ եւ ընկերներուս հանդէպ իմ արարքներուս մէջ, մեծարող եւ հնազանդ ըլլամ ծնողներուս եւ մեծերուս, բարի, քաղցր եւ սիրալիր՝ բոլոր մարդոց հանդէպ, եւ պատրաստ ըլլամ մարդոց ընելու այն՝ ինչ որ պիտի ուզեմ որ ուրիշները ընեն ինձի:

(շարունակելի)

## **PRIÈRE DES JEUNES GENS**



**Grave en mon cœur ta crainte afin que je vive avec pureté et justice et que ta présence demeure en ma pensée. Rends ma volonté capable du bien et ajustée à ta volonté, corrige mes paroles pour que je choisisse toujours ce qui te fait le plus. Ne livre pas mon âme faible aux dangers du monde et aux angoisses afin que je ne me détourne pas de ta parole et de ton droit chemin. Fais croître dans mon cœur toutes les vertus (des grains) afin que je puisse vivre par tes dons durant toute ma vie.**

**Confies-moi que je sois toujours humble et modeste par mon comportement, bon et pur par mes pensées, paroles et actions. Que je dise toujours la vérité et ne blesse personne par mes paroles et rends moi fidèle et assidu dans les accomplissements de mes devoirs et surtout dans le rôle que tu m'as octroyé.**

**Que je sois juste et bienveillant, aimant ta loi et miséricordieux dans toutes mes actions et envers mes amis. Que je te rende honneur et sois humble envers mes parents et des personnes âgées.**

**Que je sois bon, agréable et aimable envers toute personne et sois prêt de faire pour chacune ce qu'elles veulent comme les autres le font pour moi.**

**(à suivre)**



Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան  
**Feast de l'église pour la Semaine Prochaine**

**Նոյեմբեր – Novembre**

19, Երկուշաբթի - Ա. օր Յիսնակաց պահոց:

***Lundi 19 – 1<sup>er</sup> jour du jeûne de l'Avent.***

20, Երեքշաբթի - Բ. օր Յիսնակաց պահոց:

***Mardi 20 – 2<sup>ème</sup> jour du jeûne de l'Avent.***

21, Չորեքշաբթի - Գ. օր Յիսնակաց պահոց:

***Mercredi 21 - 3<sup>ème</sup> jour du jeûne de l'Avent.***

22, Հինգշաբթի - Դ. օր Յիսնակաց պահոց:

Տօն երից ամաց Ընծայեցման Սուրբ Կուսին ի Տաճարն:

***Jeudi 22 - 4<sup>ème</sup> jour du jeûne de l'Avent.***

***Fête de la Présentation de la Sainte Vierge  
au Temple, à trois ans.***

23, Ուրբաթ - Ե. օր Յիսնակաց պահոց:

***Vendredi 23 - 5<sup>ème</sup> jour du jeûne de l'Avent.***

24, Շաբաթ – Տօն Սրբոցն Գրիգորի Աքաչելագործին,  
Նիկողայոսի Հայրապետին եւ Միւռոնայ Եպիսկոպոսին:

***Samedi 24 – Fête des Saints Grégoire le Thaumaturge,  
du Patriarche Nicolas et de l'évêque Muron .***

# ՏՕՆԵՐ

Շաբաթ, 17 Նոյեմբեր 2018

## Յիշատակ Ս. Անդրեաս եւ Ս. Փիլիպպոս Առաքեալներու

Ս. Անդրեաս առաքեալը, մինչ Յիսուս Քրիստոսին հետեւիլը, նախապէս եղած էր Յովհաննէս Մկրտիչին աշակերտը: Ան Պետրոս առաքեալին եղբայրն ու արհեստակիցն էր: Փրկիչի համբարձումէն եւ Ս. Յովհաննէս Մկրտիչի բարձրացումէն յետոյ Անդրեաս առաքեալը քարոզած է Հիւսիսային Յունաստանի եւ սկիւթներու երկրին մէջ: Նահատակուած է Պատրաս քաղաքին մէջ:



Ս. Փիլիպպոս առաքեալը Հրեաստանի Բեթսայիդայէն էր, Պետրոս առաքեալին հայրենակիցը: Հաւանաբար ան ալ նախապէս եղած էր Յովհաննէս Մկրտիչին աշակերտը: Քարոզած է Փոքր Ասիոյ մէջ եւ նահատակուած է Հերապոլիս քաղաքին մէջ՝ խաչելութեամբ:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Անդրեաս եւ Ս. Փիլիպպոս առաքեալներուն յիշատակը կը տօնէ Ս. Խաչի 9-րդ կիրակիին յաջորդող շաբաթ օրը:

Կիրակի, 18 Նոյեմբեր 2018

## Բարեկենդան Յիսնակաց Պահոց


Յիսնակը յիսնօրեայ Պահքի շրջան է, որ կը նախորդէ Աստուածայայտնութեան տօնին: Յիսնակաց Բարեկենդանը 7 օրերու շարժականութեամբ կը նշուի Նոյեմբեր 15-էն մինչեւ 21-ը, այս տարի՝ Նոյեմբեր 15-ին կը նշուի:

Չորեքշաբթի, 21 Նոյեմբեր 2018

## Տօն Երեքամեայ Ս. Աստուածածնի Տաճարի Ընծայման

Ս. Կոյս Մարիամին նուիրուած տօներէն Է Երեքամեայ Ս. Աստուածածնի տաճարին ընծայման տօնը, որ բոլոր Քրիստոնէական եկեղեցիները

Կ'ոգեկոչեն նոյեմբեր 21-ին: Ըստ աւանդութեան՝ երեք տարին լրանալէ յետոյ, Տիրամօր աստուածավախ ու բարեպաշտ ծնողները՝ Յովակիմն ու Աննան, իրենց ուխտին համաձայն, Մարիամին ՚ընծայեն տաճարին, ուր ան կը մնայ մինչեւ նշանուիլը:



Տօնին հաստատումը կ'առնչուի այն տաճարին հետ, որ կառուցած է Յուստինիանոս կայսրը Աստուածածնի պատուին հին հրեական տաճարին տեղը, Մորիա բլուրին վրայ: Տաճարին նաւակատիքը տեղի ունեցած է 543 թուականին նոյեմբեր 21-ին: 638 թուականէն յետոյ, երբ Յուստինիանոսի կառուցած տաճարը կը վերածուի մուսուլմանական մզկիթի, տօնակատարութիւնը կը տարածուի ողջ Քրիստոնէայ աշխարհով մէկ: Աստուածածնի ընծայման տօնը Հայ եկեղեցի մուտք գործած է ԺԸ դարուն: Երեքամեայ Ս. Աստուածածնի՝ տաճարին ընծայման տօնը Հայ Առաքելական եկեղեցւոյ անշարժ տօներէն Է:



## Holidays

Saturday, November 17, 2018

## Commemoration of the Apostles Andrew and Phillip

Before becoming Christ's, disciple Apostle Andrew has been the disciple of St. John the Baptist. He was the brother of the Apostle





Peter and was a fisherman. After the Ascension of the Lord and the Descend of the Holy Spirit Apostle Andrew has preached in Northern Greece and in Scythe. Apostle Phillip was from the town Bethsaida. Perhaps he also has been the disciple of St. John the Baptist. He has preached in Asia Minor. Apostle Philip has been martyred and crucified in the town Heliople.

**Sunday, November 19, 2018**

## **Eve of the Fast of Advent**

This is the beginning of Advent - the period of "Fifty Days" (Hisnak or Yisnak) beginning with the Sunday nearest to the 25th of November and ending with the Saturday next after the Sunday nearest to the 6th of January, the Feast of Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ. Thus it covers a period of seven constant days.

**Wednesday, November 21, 2018**

## **Presentation of Three-Year-Old St. Mary to the Church**

One of the feasts dedicated to the Holy Virgin is the presentation of three-year-old Mary (Holy Mother of God) to the temple. All Christian Churches celebrate this feast of November 21. According to the Holy Tradition of the Church, after Mary's becoming three-year-old, the parents of the Holy Virgin, Jehoiakim and Anna, fulfilling their promise, bring Mary to the Temple and present her to God. Mary remains in the Church till her engagement.

Establishment of the feast is related to the Cathedral, which was built by the King


Justinianos in honor of St. Mary, the Holy Mother of God, in the place of the old Jewish temple, on the hill Moria. The cathedral had been consecrated on November 21, 543 AD. After 638 AD, when the Cathedral, built by the King Justinianos, is converted into a Moslem temple, the celebration of the feast spreads throughout the entire Christian world. The Feast of presentation of St. Mary to the Church has been included in the Armenian Apostolic Church Calendar in the nineteenth century.





**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

**ԿԻՐԱԿԻ, 18 ՆՈՅԵՄԲԵՐ 2018**



**Տ. ԵԼ ՏԻԿ. ՄԻԻՐԱՆ ԵՆ ԵՐՉԱՆԻԿ ԷԾԻԹԵԱՆԻ,  
ԽՆՂՐԱՆՔՈՎ ԽՈԳԵԿԻՆԳՍՏԵԱՆ ԱԿԱԶՍՈՆ ԱԿԻՍԻ ԿԱՏԱՐՐՈՒԿ  
ԻՐԵՆԳ ՍԻՐԵԳԵԱԼ ԶՐՈՉ`**

**ԹԵԼՄԱ  
ԷԾԻԹԵԱՆ ԱՆԹԷՓԵԱՆԻ  
(TELMA  
ECITYAN ANTERPYAN)**

**Մահուան 40-ին առիթով**



**Տիար Ռաճի Ալթանի,  
Տիկ. Ներմին Ալթանի,  
Տիկ. Չուարթ Ալթանի,  
Տիկ. Վիվիան Ալթանի,  
ԽՆՂՐԱՆՔՈՎ ԽՈԳԵԿԻՆԳՍՏԵԱՆ ԱԿԱԶՍՈՆ ԿՐ ԽՆՂՐԵՆ  
ԻՐԵՆԳ ՍԻՐԵԳԵԱԼ ԾՆՈՂԱԳ ԵՆ ԽԱՐԱԳԱՏՆԵՐՈՆ`**

**ԹԵՅՖԻՔ ԱԼԹԱՆԻ**  
(TEYFIK ALTAN)

**ՔԵՐԻՄԷ ԱԼԹԱՆԻ**  
(KERIME ALTAN)

**ՄԱՐՏԻՐՈՍ ԱԼԹԱՆԻ**  
(MARDIROS ALTAN)

**ԼՈՒՍԻ ԱԼԹԱՆԻ**  
(LUSI ALTAN)

**ՆՇԱՆ ԱԼԹԱՆԻ**  
(NISAN ALTAN)

**ԳԵՈՐԳ ԱԼԹԱՆԻ**  
(KEVORK ALTAN)

ԵՒ

**ՇՈՒՔՐԻ ԱԼԹԱՆԻ**  
(SUKRS ALTAN)

Հոգիներուն ի հանգիստ



Տիկ. Անի Թրևամեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իր սիրեցեալ մօրեղբօր`

**ՆՈՒՊԱՐ ՊԱԼԻ**  
(NOUBAR BAL)  
(Մահացած Գահիրէ)

Հոգևոյն ի հանգիստ



Տ. ԵԼ ՏԻԿ. ՍԵԼԱՆ ԵՆ Այտա ՔԻԼԻԼՔԵԱՆԻ,  
Տ. ԵԼ ՏԻԿ. ՎԱՉՉՕ ԵՆ ՍԵՂԱ ՔԻԼԻԼՔԵԱՆԻ,  
Տ. ԵԼ ՏԻԿ. ՅՈՎԻԱՆՆԵՍ ԵՆ ՍՕՆԱ ԳԱԼԱՅԾԵԱՆԻ ԵՆ ՂԱԼԱԿՆԵՐՈՆ,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ հօր ԵՆ մեծ հօր`

**ԱՒԵՏԻՔ ՔԻԼԻԼՔԵԱՆԻ  
(AVEDIK KULLUKIAN)**

Մահուան 4-րդ տարելիցին առիթով  
Ինչպէս նաեւ`  
իրենց սիրեցեալ մօր ԵՆ մեծ մօր`


**ԼՈՌԱ ՔԻԼԻԼՔԵԱՆԻ  
(LAURA KULLUKIAN)**

Մահուան 3-րդ տարելիցին առիթով



# ՆՈՒԻՐԱՏՈՒՆԻԹԻՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

*Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal  
Donations of November 2018  
have been received with great appreciation*



## **CHURCH:**

**Mr. & Mrs. Hacik & Ani Semerciyan, Mr. & Mrs. Hayk & Yolande Fesciyan, Dr. & Mrs. Haroutioun & Sima Arzoumanian \$250, Mrs. Danielle Vancole \$200, Mr. Raymond Polat \$20**

## **“GOMIDAS” TBRATZ TAS 60<sup>th</sup> ANNIVERSARY:**

**Mr. & Mrs. Murat Ozcanian, Mr. Alex Kunter \$250, Mr. & Mrs. Raffi & Mari Terziyan \$200, Mr. & Mrs. Haig & Margaret Basmajian \$100**

## **IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**

### **THE LATE NATAN MENENDYAN:**

**Mrs. Sona Maroutian \$400, Mr. Garbis Maroutian & Family \$300, Mr. Vartan Garipyan \$200, Mr. Berdj Garabedian \$150, Mr. & Mrs. Arman Bosnakyian, Mr. & Mrs. Arsen & Seta Bosnakyian, Mr. Vahé Maroutian, Mrs. Najda Menendyan, Mr. Vahe Emmian, Mrs. Marie Minassian, Ms Nadya Keshian, Mrs. Najda Bosnakyian, Mr. Haig Seferyan, Mr. Harvard Basar, Mr. & Mrs. Andranik & Karin Ohanjanian, Mrs. Diana Menendyan, Mr. & Mrs. Herman & Alin Sedef, Mr. & Mrs. Herman & Talin Yaylaoglu, Der Movsesyan Family \$100, Mrs. Houry Bosnoyan, Mr. & Mrs. Krikor & Lorie Minassian, Mr. & Mrs. Oskan & Tanya Hazarabedian, Mr. & Mrs. Hagop & Anoush Kazan, Mrs. Sosi Garibyan \$50, Mr. & Mrs. Rojer &**

**Niver Gudsuz, Mrs. Connie Fleischman, Mr. & Mrs. Avedis & Ani Kayzak, Mrs. Janet Garabedian \$40, Mr. & Mrs. Raffi Balabanian \$30**

**HOKEHANKISD:  
THE LATE AIDA SETA HOVAGIMYAN:  
Mr. Hemayak Toufayan \$50**

**THE LATE KEVORK SOZKES:  
Mr. Frank Altan \$150, Mrs. Arsaluys Gerger, Mrs. Khanam Sozkes,  
Mrs. Badashan Sozkes \$50**

**THE LATE JUSTINE ARTINIAN  
Miss Asdghig Garabedian, Mr. Hagop Artinian \$50**

**THE LATE ALTAN FAMILY  
Mrs. Nermin Tasciyan \$100**

**THE LATE TURABIAN & HAGOPIAN FAMILIES  
Mr. & Mrs. Jon & Lilian Turabian \$300**

**THE LATE NUBAR BALI:  
Ms Sonia Ternamian \$200**





# ՀՐԱԷՐ



**Սոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ  
Մայր Եկեղեցւոյ**

**Գևման, Օծման եւ Անուանակոչութեան**

**48-րդ տարեդաձին ուրախ առիթով**

Արժանապատիւ Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան  
եւ Մայր Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը

Միրով կը հրաւիրեն մեր հաւատացեալ ժողովուրդը՝ մասնակցելու հանդիսաւոր Սուրբ Պատարագին, որ տեղի պիտի ունենայ

**Կիրակի 9 Դեկտեմբեր 2018 ժամը 10:30-ին**

Սուրբ Պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ

Գանատահայոց Թեմի Առաջնորդ

**ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ**

Սուրբ Պատարագի երգեցողութիւնը կը կատարէ

«ԿՈՄԻՏԱՍ» Դպրաց Դաս Երգչախումբը՝

Ղեկավարութեամբ Սարգիս Պարսէմեանի

Սուրբ Պատարագի ընթացքին կը կատարուին արեւշատութեան մաղթանք՝

Մայր Եկեղեցւոյ ի կեանս եղող բարերարներու, անդամներու

եւ մասնաւոր Հոգեհանգստեան պաշտօն՝ Եկեղեցւոյս հանգուցեալ հոգեւորականներու, բարերարներու, անդամներու, ինչպէս նաեւ Եկեղեցւոյս մէջ իրենց ծառայութիւնը մատուցած հաւատացեալներու հոգիներուն ի հանգիստ:

Յետ արարողութեան «Մարի Մանուկեան» սրահին մէջ տեղի կ'ունենայ

ճաշկերոյթ պատրաստութեամբ՝

Մայր Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբին, որուն պիտի յաջորդէ

գեղարուեստական յայտագիր:







# INVITATION



À l'occasion du 48<sup>e</sup> anniversaire  
de la consécration et nomination de  
la Cathédrale Arménienne  
St. Grégoire l'Illuminateur de Montréal  
Le Père David Margaryan  
et le Conseil Paroissial de la Cathédrale  
ont l'honneur de vous convier  
**dimanche 9 décembre 2018 à 10:30h**

à la Sainte Messe solennelle qui sera célébrée  
par Sa Grace l'Évêque  
**ABGAR HOVAKIMYAN**

**Primat Diocese Arménienne du Canada**

**Prière d'Action de Grâce pour les bienfaiteurs de la  
Cathédrale Messe de Requiem pour le repos de l'âme des  
disparus, serviteurs et bienfaiteurs de la Cathédrale**

**La Messe sera interprétée par la chorale Gomidas**

**Sous la direction de Sarkis Barsemyan**

**A l'issue de la Sainte Messe, une réception aura lieu  
dans la salle Marie Manoogian organisée  
par la Dames Auxiliares  
de la Cathédrale, puis un programme musical.**





**Website:**  
**[www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**

Սիրելի հաւատացեալներ,

Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի, թէ յետայսու կարելի է այցելել  
Եկեղեցւոյ **Կայքէջը - Website [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca),**

ուր պիտի գտնէք Եկեղեցւոյ վերաբերող լուրերը, ձեռնարկներու  
վերաբերեալ տեղեկութիւնները, կատարել Ձեր սրտաբուխ  
Նուիրատուութիւնները եւ օգտուիլ ընձեռուած այլ  
կարելիութիւններէն համացանցային դրութեամբ:

Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

*Dear Parishioners,*

*We are glad to inform you our Church's newly developed*

***Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca),***

*where you will read the latest church news and events,  
meanwhile you can also make your online church donations and  
benefiting from other possibilities of our Website.*

***Thank you for support!***

***Parish Council***

**Ծիսական Խորհուրդ**



# Ուշադրութիւն Մեր Սիրելի Հաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ: Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

*Ծիսական Խորհուրդ*

## **Attention to our beloved parishioners,**

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.

*Parish Council*





# ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Բարձր Հովանաւորութեամբ՝

**Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի**

Առաջնորդ, Գանատահայոց Թեմի

Նախաձեռնութեամբ՝

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ**

Չօնուած՝

**Ի Պատիւ եւ ի մեծարումն՝**

**«Կոմիտաս» Դպրաց Դաս Երգչախումբի**

# 60

-Ամեակին

**Շաբաթ, 8 Դեկտեմբեր 2018, երեկ. ժամը 7-ին Եկեղեցոյ մէջ**

Յաւարտ հանդիսութեան հիւրասիրութիւն Եկեղեցոյ «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ

Under the auspices of

**Bishop Abgar Hovagimyan**

Primate of the Armenian Holy Apostolic Church Canadian Diocese

In honor of the

**«Gomidas» Choir's 60<sup>th</sup> Anniversary**

A memorable evening of music, poetry  
and a musical performance by the Gomidas Choir

**December 8, 2018 at 7:00 pm in the Cathedral**

Coffee reception following the event in the «Vatché Hovsepien» hall

Սուտքի Նուէր / Donation \$10

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 • Tel.: 514 279-3066 • Fax: 514 279-8008

stgregorychurch@gmail.com



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



48<sup>-րդ</sup>



# ՏԱՐԵՂԱՐՁ

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Գնման, Օծման եւ Անուանակոչութեան

Հովանաւորութեամբ

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի  
Բարեխնամ Առաջնորդ Գանատահայոց Թեմին

**Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018**

Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին

Պատարագիչ՝

Առաջնորդ Սրբազան Հայր

Յաւարտ Ս. Պատարագի

Տօնական ճաշկերոյթ եւ Գեղարուեստական  
Յայտագիր «Մարի Մանուկեան» սրահին մէջ

Տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել  
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

Մինչեւ 4 Դեկտեմբեր 2018







Նախաձեռնութեամբ՝  
 Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ  
 Լավալի Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ  
 Թէքէեան Մշակութային Միութեան



In collaboration with  
 St. Gregory the Illuminator Armenian Cathedral  
 Holy Cross Armenian Church  
 Tekeyan Cultural Association

# NEW YEAR'S EVE EXTRAVAGANZA

## 2019

Featuring Nerses Adourian  
 & 5 member band  
 DJ Hovsep



December 31, 2018

8:00 pm at Centre Arménie

1025 Boulevard Élisabeth, Laval, QC H7W 3J7

Eight course appetizers and full course meal  
 Champagne toast and party favors

Entrance gifts  
 Kids entertainment and Santa

Adults - \$95 (after December 1 \$110)

Children - (age 7-14) \$45

Children ages 6 and under - free

For reservations, please contact:

St Gregory the Illuminator (514) 279 3066

Tekeyan Cultural Association (514) 747 6680

Holy Cross Church (450) 687 5355

Centre Arménie (438) 826 2364





Ս. Գրիգոր Լուսաւորիչ  
Պատանեկան Երաժշտական Խումբ



Jeunesse  
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը կը վերսկսին  
Կիրակի, 14 Յոկտեմբեր 2018-ին, կեսօրէ ետք, ժամը  
1-ին:

Les pratiques de la chorale des Jeunes  
recommencerons

Le dimanche, 14 octobre 2018 à 13:00 heures

Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ  
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de  
l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու  
հիմնական երաժշտութեան նութաները, միաժամանակ պիտի  
մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les  
enfants auront l'opportunité d'apprendre les  
bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի  
բաղկանայ ժամանակակից, դասական եւ  
կրօնական երաժշտական կտորներէ,  
Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales  
contemporaines, classiques et religieuses, de langue française et  
arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ  
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/  
Fax: (514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Մայր Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

### SUNDAY SCHOOL

For the ages of 6-14 years old children

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
  - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ  
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար  
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան



*In a pleasant and friendly atmosphere, the  
children will learn:*

- *Psalms & songs*
- *Armenian language skills*
- *Interesting stories & entertainments*
- *Fun & fascinating consecutive Fieldtrips*

*Sunday School Every Sunday  
at 11:00 am*

*For more information and registration call to the  
Church office  
(514) 279-3066*

*Fr. David Margaryan*

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com), [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՀՈԳԵԻՈՐ ԶՐՈՅՑ**



**Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ  
ՀԵՏ**

***BIBLE STUDY & INTERESTING  
DISCUSSIONS***

**BY FR. DAVID MARGARYAN**

**Տեղի պիտի ունենայ ամեն Հինգշաբթի  
երեկոյեան՝ ժամը 7-ԷՆ սկսեալ Եկեղեցւոյ մէջ:**

**Every Thursday Starting at 7:00 pm  
in the Church.**

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները  
մասնակից ըլլալու**

**Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի՝  
Ներկայացուցած Աստուածաշնչական  
Նիւթերուն:**

**Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն**

**We invite all our beloved faithful to be present  
to the bible sessions with spectacular biblical  
subjects that will be presented  
by Fr. David Margaryan.**

**Coffee and tea will be served  
during the sessions.**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին  
Ներկայութիւնը:**

**Cordially we expect everyone's  
presence.**

**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-  
8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)**

**Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**



## **Յայտարարութիւն**

**Սիրելի հաւատացեալներ,**

**Կը տեղեկացնենք ձեզի թէ յետայսու**

**Ճիական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը,**

**Երեկոյեան ժամը 5-5:30, կ'ես ժամ տեւողութեամբ, առիթը պիտի ընծայուի մեր հաւատացեալներուն խորհրդակցական հանդիպում մը ունենալու**

**Ճիական Խորհուրդին հետ:**

**Այն հաւատացեալները, որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:**

**Ժամադրութեան համար հեռաձայնել**

**Եկեղեցւոյ քարտուղարութեան՝**

**(514) 279-3066**

**Շնորհակալութեամբ՝  
Ճիական Խորհուրդ  
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ**